ՀԱՋԱՐԱՄՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՈՒՅՍԻ ՃԱՌԱԳԱՅԹ»
աստվածաշնչյան դասընթաց

Դաս 5

ՀԱԶԱՐԱՄՅԱ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հազարամյա թագավորության մասին գոյություն ունեն բազմաթիվ ուսմունքներ և կարծիքներ: Շատերը կարծում են, թե դա կլինի ամենաերջանիկ ժամանակը մեր մոլորակի պատմության մեջ, երբ ամբողջ աշխարհում կլինի խաղաղություն և անվտանգություն, երբ չեն լինի այլևս պատերազմներ և արյունահեղություններ, և մարդիկ կապրեն խաղաղ ու երջանիկ:

Հավատացյալների մեջ շատ է տարածված այն կարծիքը, որ հազարամյա թագավորության ժամանակ երկրի բոլոր բնակիչները կընդունեն Քրիստոսին, Ում այսօր մերժում են: Բայց մենք չենք գտնում, թե Սուրբ գրքում խոսվում է այդպիսի ժամանակի մասին, երբ ողջ աշխարհը կապաշխարի: Քրիստոսը որոմների մասին առակում ցույց տվեց, որ արդարները և մեղավորներն աշխարհում կլինեն մինչև վերջ, մինչև հունձքը, իսկ «հունձքն աշխարհի վերջն է» (Մատթեոս 13.24-30,39): Փրկությունը մեզ առաջարկվում է միայն այս կյանքում: Մահից հետո մեր ապագան կախված է Աստծո դատաստանից: Դրա համար բոլորին խրատ է տրվում. «Այսօր, եթե նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերն ինչպես որ բարկանալու ժամանակում» (Եբրայեցիս 3.15):

Ամբողջ Սուրբ Գրքում միայն մի գլխում է խոսվում հազարամյա թագավորության մասին: Դա Հայտնություն գրքի քսաներորդ գլուխն է: Այդ գլխի առաջին ինը համարներում «հազար տարի» բառը հիշատակվում է վեց անգամ: Կարդանք այդ համարները:

«Եվ տեսա մի հրեշտակ վայր գալիս երկնքից, որ դժոխքի բանալին ուներ, և մի մեծ շղթա իր ձեռքում: Եվ նա բռնեց այն վիշապին, այն առաջի օձին, որ է Բանսարկուն և սատանան, և կապեց նրան հազար տարի: Եվ գցեց նրան անդունդի մեջ, և փակեց և կնիք դրեց նրա վրա, որ էլ չմոլորեցնի ազգերին, մինչև որ հազար տարին լրանա, և նրանից հետո պետք է որ նա մի քիչ ժամանակ արձակվի:

Եվ տեսա աթոռներ, և նրանց վրա նստեցին և դատավորություն տրվեց նրանց, և նրանց հոգիները, որ գլխատվել էին Հիսուսի վկայության համար և Աստծո խոսքի համար, և նրանց, որ չերկրպագեցին գազանին և ոչ էլ նրա պատկերին, և նրա դրոշմը չառան իրենց ճակատի և ոչ էլ իրենց աջ ձեռքի վրա, և սրանք կենդանացան և Քրիստոսի հետ թագավորություն արեցին հազար տարի: Իսկ մեռելների մնացյալները չկենդանացան, մինչև որ հազար տարին լրանա: Սա առաջին հարությունն է: Երանելի և սուրբ է, որ բաժին ունի առաջին հարության մեջ, սրանց վրա իշխանություն չունի երկրորդ մահը, այլ Աստծո և Քրիստոսի քահանաներ կլինեն և նրա հետ կթագավորեն հազար տարի:

Եվ երբ որ հազար տարին կլրանա՝ կարձակվի սատանան

իր բանտից, և դուրս կգնա, որ մոլորեցնի այն ազգերը, որ երկրի չորս անկյունում են, և Գոգը և Մագոգը, որ հավաքի նրանց պատերազմի, որոնց թիվը ծովի ավազի չափ է: Եվ վեր գնացին երկրի լայնության վրա, և սուրբերի բանակը և սիրելի քաղաքը շրջապատեցին: Եվ երկնքից կրակ իջավ Աստծուց և լափեց նրանց»:

Գրքի այս խոսքերը կարդալիս շատ հարցեր են առաջանում, որոնց մասին մենք կցանկանայինք իմանալ ավելին: Ի՞նչ կկատարվի հազար տարվա ընթացքում, որի մասին այստեղ խոսվում է: Արդյոք այդ ժամանակաշրջանի սկիզբն ու վերջը որոշակի դեպքերով նշանակվա՞ծ են: Ինչպիսի՞ տեսք կունենա երկիրը այդ ժամանակամիջոցում: Բոլոր այս հարցերի պատասխանները մենք գտնում ենք Սուրբ Գրքում:

Ամենից առաջ մենք կքննարկենք, թե ինչ կկատարվի հազար տարվա սկզբում, այսինքն՝ ինչ դեպքերով կնշվի հազարամյա թագավորության սկիզբը:

Քրիստոսը Իր՝ երկինք համբարձվելուց առաջ խոստացավ, որ դարձյալ կգա: Նրա գալուստը գաղտնի հայտնություն չի լինի, որի մասին կիմանան միայն որոշ ընտրյալներ: Ո՛չ: Հովհաննես առաքյալն ասում է. «Ահա նա գալիս է ամպերով, և ամեն աչք կտեսնի նրան» (Հայտնություն 1.7): (Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս այս շարքի հոդվածներից երրորդում):

Ավետարանի վերջին պատգամը Քրիստոսի գալստյան մասին, որն այժմ քարոզվում է ամբողջ աշխարհում, երկրագնդի բնակչության մեծ մասի կողմից չի ընդունվի: Այդ պատգամի դեմ պայքարն իր էությամբ պայքար է Քրիստոսի դեմ: «Սրանք պատերազմ կանեն Գառի հետ, և Գառը կհաղթի նրանց» (Հայտնություն 17.14):

Քրիստոսի երկրորդ գալստյանը կնախորդեն արտասովոր պատերազմներ, նշաններ և «ահավոր բաներ», որոնց մասին Քրիստոսը խոսեց Ղուկաս 21.9-11 և 25-27-ում: Երկրի բնակիչները կտանջվեն վերջին յոթ պատուհասներից, որոնք նկարագրված են Հայտնություն 16-րդ գլխում: Այն ժամանակ Քրիստոսը կգա աննկարագրելի փառքով, երկնային հրեշտակների ուղեկցությամբ: «Որովհետև մարդի Որդին գալու է Իր Հոր փառքով Իր հրեշտակների հետ» (Մատթեոս 16.27):

Այդ ժամանակ էլ տեղի կունենա բոլոր արդարների հարությունը, «Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն, և հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու, և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա Թեսաղոնիկեցիս 4.15,16): Այս հարությունը Հայտնության մեջ անվանված է «առաջին հարություն»:

Պողոս առաքյալը քարոզում

էր, «թե արդարների և մեղավորների հարություն պիտի լինի» (Գործք առաքելոց 24.15): Եվ Քրիստոսն Ինքն էլ ասում է երկու տարբեր հարության մասին. մեկն անվանում է «կյանքի հարություն», մյուսը՝ «դատաստանի հարություն» (Հովհաննես 5.29):

Արդարների հարությունը Քրիստոսի գալստյան ժամանակ կապացուցի, որ մահը հաղթված է: «Երանելի և սուրբ է, որ բաժին ունի առաջին հարության մեջ, սրանց վրա իշխանություն չունի երկրորդ մահը, այլ Աստծո և Քրիստոսի քահանաներ կլինեն և Նրա հետ կթագավորեն հազար տարի» (Հայտնություն 20.6): Քրիստոսն Իր հետ արդարներին պարգև կբերի, նրանք կստանան հավիտենական կյանքն ինչպես Աստծո պարգև: «Աստծո շնորհը (պարգևը)՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Հռոմեացիս 6.23):

«Առաջին հարությունը» կլինի այն դեպքերից մեկը, որը կնշանավորի հազարամյա թագավորության սկիզբը: Արդարների հարության հետ միասին կփոխվի և այն արդարների վիճակը, ովքեր այդ ժամանակ կապրեն երկրի վրա: Նրանց մասին մենք կարդում ենք. «Ոչ թե ամենքս կննջենք, այլ ամենքս կփոխվենք: Հանկարծ մի ակնթարթում՝ հետին փողի ժամանակին, որովհետև փողը կփչվի, և մեռելները հարություն կառնեն անապականելի, և մենք կփոխվենք: Որովհետև պետք է որ այս ապականացուն հագնի անապականությունը, և այս մահկանացուն հագնի անմահությունը» (Ա Կորնթացիս 15.51-53):

Այսպիսով, հարություն առած արդարները և վերափոխված արդարները միասին Քրիստոսի կողմից կվերցվեն երկինք Նրա գալստյան ժամանակ (Ա Թեսաղոնիկեցիս 4.15,16): Այդ ժամանակ կկատարվի Քրիստոսի խոստումը. «Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ ինձ մոտ կառնեմ, որ ուր ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.2,3):

Ի՞նչ կկատարվի այդ ժամանակ երկրի վրա մնացած բնակիչների հետ: Հայտնություն 20.5-ում կարդում ենք. «Իսկ մեռելների մնացյալները չկենդանացան, մինչև որ հազար տարին լրանա»: Ամբարիշտները, որ գերեզմաններում են գտնվում, հարություն չեն առնի Քրիստոսի գալստյան ժամանակ: Իսկ բոլոր ամբարիշտները, որ այդ ժամանակ ապրում էին, կկործանվեն Նրա գալստյան փառքից, «որովհետև մեր Աստվածը փչացնող կրակ է» (Եբրայեցիս 12.29): Մեղքն ու մեղավորը չեն կարող ապրել Աստծո ներկայության մեջ: Երբ հայտնվի թագավորների Թագավորը իր ամբողջ փառքով, նրանք կկորչեն այդ փայլից, որ գերազանցում է ամեն երևակայություն:

Մարգարեին ցույց տրվեց երկրի վիճակը, երբ նրա վրա չեն մնացել բնակիչներ՝ ո՛չ արդարներ, ո՛չ մեղավորներ: «Նայեցի երկրի վրա, և ահա պարապ և անձև էր, և երկնքին, և նրա լույսը չկար: Նա-

յեցի սարերին, և ահա դողում էին, և բոլոր բլուրները սասանվում էին: Նայեցի, և ահա մարդ չկար, և երկնքի բոլոր թռչունները փախել էին: Նայեցի, և ահա Կարմեղոսը անապատ էր, և նրա բոլոր քաղաքները քարուքանդված էին Տիրոջ երեսից և Նրա բարկության բորբոքման երեսից: Որովհետև այսպես է ասում Տերը. Բոլոր երկիրը ավերակ պիտի դառնա» (Երեմիա 4.23-27): Ամբողջ երկրի վրա չի մնա ոչ մի կենդանի արարած, և դրանով էլ կսկսվի հազարամյա ժամանակաշրջանը, որի ընթացքում, Գիրքն ասում է, որ սատանան «կապված» կլինի: Նա շղթայված է երկրին, որի վրա մարդ չկա: Ավերակների և մեռած ոսկորների մեջ սատանան և նրա հրեշտակները հնարավորություն կունենան հազար տարվա ընթացքում կշռադատել մեղքի և Աստծո կառավարման դեմ ապստամբության հետևանքները: Ամբողջ երկիրը նման կլինի հսկա գերեզմանոցի:

Սատանան հազար տարով թողնված է երկրի վրա, որը Հայտնություն 20-րդ գլխում նկարագրված է ինչպես «անդունդ»: Այդ բառը նախկինում արդեն հանդիպել է Աստվածաշնչում. «Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա» (Ծննդոց 1.2): «Անդունդ» նշանակում է անբնակ վայր քաոսային վիճակում: Այդպիսին էր երկիրն այն ժամանակ, քանի դեռ Աստված չէր ստեղծել ամեն «շատ բարին»: Երեմիա մարգարեն, ինչպես արդեն կարդացինք, նորից է երկիրը տեսնում այդ վիճակում: Այս անգամ այն կլինի սատանայի բանտը հազար տարվա ընթացքում, երբ սատանան չի կարող զբաղվել իր սովորական գործով՝ մարդկանց խաբելով: Նրա ձեռքերը կապված են: Նա չի կարող ոչ ոքի մոլորեցնել, «մինչև որ հազար տարին լրանա», որովհետև երկրի վրա «մարդ չկա»:

Հազար տարվա ընթացքում Աստծո զավակները կգտնվեն երկնքում: Հովհաննեսը գրում է. «Եվ տեսա աթոռներ, և նրանց վրա նստեցին և դատավորություն տրվեց նրանց, նրանք կենդանացան և Քրիստոսի հետ թագավորություն արեցին հազար տարի» (Հայտնություն 20.4):

Երկնային դատարանում պահվում է յուրաքանչյուր մարդու «գործը»: Այդ գրանցումների հիման վրա, որոնք անվանվում են գրքեր, կարելի է տեսնել Աստծո ողորմությունը և արդարությունը մարդկանց հանդեպ: Այդ գրքերում գրանցվում են մարդու բոլոր խոսքերը, գործերը և դրդապատճառները: Մենք բնավ չենք զարմանում դրա վրա, որովհետև մարդիկ նույնպես միջոցներ են գտել ցանկացած բան գրառելու և մտապահելու համար: «Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առաջին, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով, ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար» (Բ Կորնթացիս 5.10):

Բացի դրանից՝ «հիշատակի գիրք գրվեց նրա առաջին Տերից

վախեցողների համար, և նրա անունը պատվական համարողների համար» (Մաղաքիա 3.16): Բայց այդ գրքերից ամենակարևորը կյանքի գիրքն է, որտեղ գրված են բոլորի անունները, ովքեր Քրիստոսին ընդունում են որպես իրենց Փրկիչ:

Աստծո դատաստանը լուրջ հարց է և պետք է մեզ լուրջ խորհրդածությունների առիթ տա: Փրկիչն ասում է. «Ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն՝ դատաստանի օրը հաշիվ պիտի տան: Որովհետև քո խոսքից կարդարանաս, և քո խոսքից կդատապարտվես» (Մատթեոս 12. 36,37): Ինչքա՜ն ապացույցներ կլինեն այդ գրքերում, որ մեր օգտին չեն խոսի:

Աստծո կատարյալ օրենքի առջև մենք երբեք չէինք կարող արդարանալ, եթե չունենայինք սիրառատ Փրկչին: Մեզ խոստացված է. «Եթե մեկը մեղանչի, Բարեխոս ունենք Հոր մոտ Հիսուս Քրիստոս արդարին: Եվ նա քավություն է մեր մեղքերի համար, և ոչ միայն մերինների, բայց բոլոր աշխարհի էլ» (Ա Հովհաննես 2.1,2):

Հազարամյա թագավորության ընթացքում երկինքներում դատ է տեղի ունենալու: Փրկված սուրբերը կթագավորեն Քրիստոսի հետ հազար տարի, և այդ ժամանակ նրանց առջև կբացվեն գրքերը՝ ամբարիշտների նկատմամբ դատաստանի որոշմամբ: Պողոս առաքյալը գրում է. «Կամ թե չգիտե՞ք, որ սուրբերն աշխարհը կդատեն: Չգիտե՞ք, որ մենք հրեշտակներին կդատենք» (Ա Կորնթացիս 6.2,3): Այդ ժամանակամիջոցում Աստծո զավակները կսովորեն դեպքերին և գործերին նայել Աստծո տեսանկյունից: Նա նրանց առջև բաց կանի ամեն մի մեղավորի անձնական «գործը», ինչքան էլ լավը թվա նրա կյանքը: Իսկ երբ փրկվածները ծանոթանան բոլոր փաստերի հետ, որ այժմ ծածկված են նրանցից, նրանք կհամաձայնեն, որ Աստված արդարացի է վարվել՝ նրանց Իր թագավորությունը չթողնելով: Նրանք կբացականչեն. «Ճշմարիտ և արդար են քո դատաստանները» (Հայտնություն 16.7): Ընդունելով Աստծո արդարադատությունը՝ նրանք կդադարեն արցունք թափել մարդկանց համար, ովքեր չմտան Աստծո թագավորությունը:

Այժմ մենք եկանք հետևյալ հարցին. ի՞նչ դեպքերով է ավարտվում հազարամյա թագավորությունը:

Այդ ժամանակ տեղի կունենա մեղավորների հարությունը, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր չեն մասնակցել առաջին հարությանը: «Մեռելների մնացյալները չկենդանացան, մինչև որ հազար տարին լրանա» (Հայտնություն 20.5): Այժմ տեղի կունենա այն հարությունը, որը Քրիստոսն անվանեց դատաստանի հարություն (Հովհաննես 5.29):

Անօրենների հարությունը կարծակի սատանայի ձեռքերը: Նա դարձյալ գործ կունենա, նորից կարող է մարդկանց խաբել: Նա միլիոնավոր մարդկանց առջև հանդես կգա՝ նրանց ներշնչելով, որ ինքն այն չէ, ինչպիսին իրեն

մինչ այդ ընդունել են: Հայտնություն 20.7-ում գրված է. «Եվ երբ որ հազար տարին կլրանա, կարձակվի սատանան իր բանտից, և դուրս կգնա, որ մոլորեցնի այն ազգերը, որ երկրի չորս անկյունումն են, և Գոգը և Մագոգը, որ հավաքի նրանց պատերազմի, որոնց թիվը ծովի ավազի չափ է»: Դրանք կործանված ժողովուրդներն են: Սատանան կշարունակի իր պայքարն Աստծո դեմ և ամբարիշտների այդ բազմությանը պայքարի կտանի Նրա և Նրա թագավորության դեմ:

Հազար տարին լրանալուց հետո երկնային Երուսաղեմ քաղաքը երկնքից կիջնի երկրի վրա, ինչպես դա նկարագրված է Հայտնություն 21.2-ում. «Եվ ես՝ Հովհաննեսս, տեսա սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը՝ վայր գալիս Աստծուց՝ երկնքից»: Այդ քաղաքում կգտնվեն Աստծո սուրբերը՝ բոլոր դարերի փրկվածները, որ այնտեղ են վերցվել հազարամյակի սկզբին: Քաղաքի դռներից դուրս կգտնվեն բոլոր մեղավորները, որ Աստծուն և Նրա օրենքին չեն հնազանդվել:

Այստեղ առաջին և վերջին անգամ կհանդիպի ամբողջ մարդկությունը: Այստեղ կլինի յուրաքանչյուր մարդ, որ երբևէ ապրել է երկրի վրա, Նա կա՛մ կգտնվի քաղաքի մեջ՝ փրկվածների մեջ, կա՛մ էլ քաղաքից դուրս՝ կորչողների մեջ: Այդ ժամանակ ամբարիշտները շատերին, որոնց նրանք առաջ ճանաչում էին, կտեսնեն երկնային թագավորության մեջ, իսկ իրենց՝ թագավորությունից դուրս: Նրանք կհասկանան, որ պայքարում պարտվեցին, «դռներից դուրս» մնացին: «Եվ վեր գնացին երկրի լայնության վրա, և սուրբերի բանակը և սիրելի քաղաքը շրջապատեցին: Եվ երկնքից կրակ իջավ Աստծուց և լափեց նրանց. սա երկրորդ մահն է» (Հայտնություն 20.8,9,14):

Այդ կրակը սկզբից պատրաստված էր «սատանայի և նրա հրեշտակների համար» (Մատթեոս 25.4): Այժմ այն կոչնչացնի բոլոր մեղավորներին և իրեն՝ սատանային, այնպես որ «նրանց համար արմատ և ոստ պիտի չթողնի» (Մաղաքիա 4.1): Դա կլինի «դատաստանի և ամբարիշտ մարդկանց կորստյան օրը», որի մասին գրում է Պետրոս առաքյալը: Այն ժամանակ «երկինքը շառաչյունով կանցնի, և տարերքը կրակով վառված կհալվեն» (Բ Պետրոս 3.7,10): Դրանով կվերջանա բարու և չարի, Քրիստոսի և սատանայի միջև բազմադարյան պայքարը: Այնուհետև այդ քաոսից Աստված կստեղծի նոր երկիրը: «Բայց նրա խոստմունքի պես՝ նոր երկնքի և նոր երկրի ենք սպասում, որոնցում արդարություն է բնակվում» (Բ Պետրոս 3.13):

Ո՞վ կապրի նոր երկրի վրա: Այս հարցի պատասխանը նույնպես գտնում ենք Սուրբ Գրքում: «Եվ մի մեծ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Ահա Աստծո խորանը մարդկանց հետ, և Նա կբնակվի նրանց հետ, և նրանք կլինեն Նրան ժողովուրդ, և Ինքն Աստված նրանց հետ կլինի նրանց Աստված» (Հայտնություն 21.3): Այդ նրանք են, ում անունները գրված

են կյանքի գրքում: «Եվ բնավ չի մտնի նրա մեջ ոչ մի անմաքրություն անող և պղծություն և ստություն գործող, բայց միայն նրանք, որ Գառի կյանքի գրքի մեջ գրված են» (Հայտնություն 21.27):

Այդ մարդկանց մասին ասվում է. «Երանելի են Նրա պատվիրանները պահողները, որ նրանցը կլինի իշխանությունը կյանքի ծառի վրա, և քաղաքի դռնով ներս կմտնեն» (Հայտնություն 22.14): Այդ քաղաքն Աստված պատրաստել և խոստացել է Աբրահամի նման հավատացյալների համար: «Որովհետև սպասում էր այն հիմունքով հաստատված քաղաքին, որի ճարտարապետը և Արարիչն Աստված է» (Եբրայեցիս 11.10): «Եթե դուք Քրիստոսինն եք, ուրեմն Աբրահամի զավակ եք և խոստմունքի համեմատ ժառանգներ» (Գաղատացիս 3.29): Նրանք միշտ «ավելի ազնիվին են ցանկանում, այսինքն՝ երկնավորին, և նրա համար Աստված ամոթ չի համարում նրանց Աստվածը կոչվելու, որովհետև մի քաղաք է պատրաստել նրանց համար» (Եբրայեցիս 11.16):

Այդ մարդկանց բնավորության մասին ասված է. «Երանի հեզերին, որ նրանք կժառանգեն երկիրը» (Մատթեոս 5.5): Նրանք անվանված են նաև հաղթողներ. «Ով որ հաղթի, ամենը կժառանգի» (Հայտնություն 21.7):

Մի անգամ Պետրոսն ասաց Փրկչին. «Ահա մենք ամեն բան թողեցինք և քո հետևից եկանք, հիմա ի՞նչ կլինի մեզ, Հիսուսն էլ ասաց նրանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե դուք՝ Իմ հետևից եկողներդ, վերստին ծննդում (երկրորդ գալստյան ժամանակ), երբ որ մարդի Որդին Իր փառաց աթոռի վրա կնստի, դուք էլ տասներկու աթոռի վրա կնստեք, և ամեն, ով որ թողեց տներ, կամ եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ արտեր իմ անունի համար, հարյուրապատիկ կառնի և հավիտենական կյանքը կժառանգի» (Մատթեոս 19.27-29):

Թողե՞լ եք արդյոք աշխարհը հանուն Քրիստոսի: Պատրա՞ստ եք արդյոք հազարամյա թագավորությանը, այն դեպքերին, որոնցով այն սկսվում և որոնցով վերջանում է: Բարեկամնե՛ր, մենք պետք է Աստծո զավակներ լինենք, Նրա ժողովուրդը, որը հնազանդ է Նրա կամքին, հավատարիմ Նրա խոսքին, պատրաստ Նրա հետևից գնալու, որպեսզի մեր անունները գրվեն Նրա կյանքի գրքում, և մենք կարողանանք Նրա հետ լինել ինչպես հազար տարվա ընթացքում՝ երկնքում, այնպես էլ հավիտյան՝ Նոր երկրի վրա, որտեղ «կջնջի Աստված բոլոր արտասուքը նրանց աչքերից, և մահն այլևս չի լինի, ո՛չ սուգ, և ո՛չ աղաղակ, և ո՛չ ցավ այլևս չի լինի, որովհետև առաջիններն անցան: Եվ աթոռի վրա նստողն ասաց. Ահա ամեն բան նոր եմ անում» (Հայտնություն 21.4,5):